# Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

<<  >>_____________ 2019 ԹՎԱԿԱՆԻ N ______ - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 143-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը   ո ր ո շ ու մ  է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի <<Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին>> N 143-Ն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետում <<կազմակերպությունների հետ>> բառերից հետո լրացնել <<, ներառյալ միջազգային հումանիտար առաքելությունների շրջանակներում>> բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: